

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հեղինակ՝ Ա. Բակունցի անվան հ. 1 ավագ դպրոցի
դասվար Սալոնիկ Ձհանգիրյան

Ղեկավար՝ Թամարա Աթայան

2023

Ներածություն

Երեխան ունի մեծահասակ դառնալու հազար ճանապարհ:

Հին հունական աֆորիզմ

- ✚ Երեխաների զարգացումն ուղղորդելու կամ սեփական ունակությունները բացահայտելու կարողությունների ձևավորումը ուսուցչի հիմնական խնդիրն է: Այս խնդիրը ուսուցչին և աշակերտներին մղում է դառնալու հետազոտող:

Ժամանակակից կրթական զարգացումները թելադրում են նոր մոտեցումներ սովորողների ուսումնական գործունեության զարգացմանը (դասարանային և արտադասարանային գործունեության ընթացքում):

Դաս-դասարանային համակարգի տեխնոլոգիան երկար տարիներ երիտասարդ սերնդին գիտելիքների, կարողությունների ու հմտությունների հաղորդման համար համարվում էր ամենաարդյունավետը: Հասարակական կյանքում տեղի ունեցած ժամանակակից փոփոխությունները պահանջում են կրթության զարգացման նոր եղանակներ, մանկավարժական տեխնոլոգիաներ՝ նպատակաուղղված անձի անհատականության, ստեղծագործական նախաձեռնողականության, ինֆորմացիոն տարածքներում ինքնուրույն առաջընթացի հմտությունների զարգացմանը:

Այսօր ուսուցիչը սովորողների մոտ պետք է ձևավորի կյանքում խնդիրներ առաջադրելու և լուծման ուղիներ որոնելու, գտնելու ունիվերսալ կարողություններ: Շեշտը դրվում է ազատ անհատի դաստիարակման, երեխաների մոտ ինքնուրույն մտածելու, գիտելիքներ հայթայթելու և կիրառելու, որոշումներ կայացնելու, գործունեությունը պլանավորելու, տարբեր խմբերի հետ արդյունավետ համագործակցելու, մշակութային կապերի մեջ մտնելու կարողությունների ձևավորման ու զարգացման վրա:

Այս ամենը պահանջում է կրթական գործընթացներում այլընտրանքային եղանակների ու միջոցների ներդրում:

Հետազոտության արդիականությունը-

Մանկավարժն այսօր պետք է հասկանա ու զգա, թե ինչպես է երեխան սովորում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ **տարրական**

դպրոցի ժամանակակից կրթական համակարգը աշակերտին առաջադրում է նոր պահանջներ:

Անհատակողմնորոշիչ ուղղվածության տեսանկյունից ուշադրությունը կենտրոնացվում է աշակերտների ճանաչողական ու անհատական ներուժի, տարբեր գիտելիքների ինքնուրույն յուրացման ունակությունների զարգացման վրա: Այսօր կրթական գործընթացում լայնորեն ներդրվում են կրթական տեխնոլոգիաներ ու մեթոդներ՝ հիմնված սովորողների նախագծային ու հետազոտական գործունեության վրա:

Հետազոտական աշխատանքը դպրոցում վերապրում է զարգացման նոր փուլ և դառնում է կրթության արդիականացման ուղղություններից մեկը:

Հետազոտության նպատակը –

Ճանաչել՝

- 👉 Հետազոտական գործունեությունը որպես աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման փուլ,
- 👉 հետազոտական գործունեությունը որպես գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, ընդլայնման ու խորացման, ինչ-որ բան հայտնաբերելու, անհայտը ճանաչելու հնարավորություն:

🍷 հետազոտական գործունեության առանձնահատկությունները,

🍷 գիտական և աշակերտական հետազոտական գործունեության նմանություններն ու տարբերությունները,

🍷 աշակերտների հետազոտական գործունեության կազմակերպման մեթոդիկան:

Վարկած – *Ես ենթադրում եմ, որ ուսուցիչների և աշակերտների համատեղ հետազոտական գործունեությունը զգալի չափով նպաստում է ժամանակակից կրթական խնդիրների իրականացմանը, սովորողների վերառարկայական կարողությունների զարգացմանը:*

Այստեղից բխում են հետազոտության խնդիրները՝

ուսումնասիրել՝

🍷 աշակերտական հետազոտության նպատակներն ու խնդիրները,

🍷 հետազոտական գործունեության առանձնահատկությունները,

🍷 գիտական և աշակերտական հետազոտական գործունեության նմանություններն ու տարբերությունները,

🍷 աշակերտների հետազոտական գործունեության կազմակերպման մեթոդիկան,

🍷 աշակերտների հետազոտական գործունեության տեսակները,

🍷 հետազոտական գործունեության ներկայացման առանձնահատկությունները:

Հետազոտական գործունեության տեսակները

Ուսուցչի և աշակերտների հետազոտական գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի.

1. գիտահետազոտական գործունեություն,
2. նախագծային գործունեություն,
3. նախագծային հետազոտական գործունեություն:

Գիտահետազոտական գործունեություն

Գիտահետազոտական գործունեությունը կապված է նախապես անհայտ լուծմամբ ստեղծագործական, հետազոտական խնդրի հետ:

Առկա են՝

- հիմնական փուլերը,
- առաջադրված խնդիրը,
- ուսումնասիրության ենթակա տեսական նյութը,
- հետազոտության մեթոդները և դրանց գործնականում կիրառությունը,
- սեփական նյութը,
- գիտական մեկնաբանությունը,
- սեփական եզրահանգումները:

Հետազոտական աշխատանքի ներածական մասի կառուցվածքը՝

- ✓ Թեմայի ընտրության արդիականությունը,
- ✓ Հետազոտության խնդիրը,
- ✓ Հետազոտության օբյեկտը,
- ✓ Հետազոտության առարկան,

- ✓ Հետազոտության նպատակը,
- ✓ Հետազոտության խնդիրը,
- ✓ Առաջադրված հիպոթեզը,
- ✓ Հետազոտության մեթոդները,

Նախագծային գործունեություն

Ի՞նչ է նախագծերի տեխնոլոգիան.

1. Անհատակողմնորոշիչ կրթություն
2. Անհատական մոտեցում
3. Ուսման մեջ աշակերտի ակտիվ, ինքնուրույն, նախաձեռնող դիրքորոշման ձևավորում
4. Հետազոտական, անդրադարձային, ինքնագնահատման կարողությունների և հմտությունների զարգացում:
5. Բանիմացությունների ձևավորում և կիրառում գործնական իրավիճակներում:
6. Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացում:

Նախագծերի հիմքում ընկած է

1. կրեատիվությունը
2. տեղեկատվական տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը
3. Սեփական գիտելիքներն ինքնուրույն կառուցելու կարողությունը:

Հիմնական հասկացություններ

Նախագիծ – ուսուցման մեթոդ (կարող է կիրառվել ցանկացած առարկայի դասաժամին և արտադասարանային գործունեության ժամանակ):

Նախագիծ (նախագծում) – ուսուցման բովանդակություն:

Նախագիծ – ուսուցման գործընթացի կազմակերպման եղանակ: Նախագծի էությունն ու դասի էությունը սկզբունքորեն տարբեր են:

Նախագիծ – կրթության հատուկ փիլիսոփայություն է՝ նպատակի, գործունեության, արդյունքների և նվաճումների փիլիսոփայություն:

Նախագիծ – գործունեության այնպիսի տիպ, որը սովորեցնում է աշակերտներին ինքնուրույն որոնել, գտնել, վերլուծել ինֆորմացիան, ընդհանրացնել այն, կիրառել առանձին առարկաներից ձեռք բերած գիտելիքները, ինքնուրույնություն, պատասխանատվություն ձեռք բերել, ձևավորել ու զարգացնել պլանավորելու, որոշումներ կայացնելու կարողությունը:

Նախագիծ(ΠΡΟΕΚΤ) (բառացի) – «προ» - ձգտում դեպի առաջ, «εκτ» - քար(դեպի առաջ նետած քար):

Նախագծում(ընդհանուր ընդունված իմաստով) –մտորումներ հետագա գործունեության շուրջ կամ գործունեության նկարագրություն, որը տեղի է ունենում անորոշ իրավիճակում:

Կրթական նախագիծ — որոշակի ժամանակահատվածում(1դասից մինչև մի քանի ամիս)կրթական արդյունք ստանալու նպատակով պարապմունքի կազմակերպման եղանակ, որը նախատեսում է բոլոր մասնակիցների գործունեության բնույթը:

Նախագծային գործունեությունը համարվում է զարգացնող կրթության մեթոդներից մեկը, որը նպատակաուղղված է ինքնուրույն հետազոտական կարողությունների մշակմանը, որն էլ իր հերթին նպաստում է ստեղծագործական ունակությունների, տրամաբանական մտածողության զարգացմանը, ուսումնական գործընթացում ստացած գիտելիքների միավորմանն ու դրանք կյանքու կոնկրետ խնդիրների լուծմանը:

Ուսումնական նախագծին ներկայացվող հիմնական պահանջները

1. Ինտեգրված գիտելիքներ, հետազոտական որոնումներ պահանջող, նշանակալի խնդրի առկայություն(հետազոտական, տեղեկատվական, գործնական):
2. Ենթադրող արդյունքների գործնական, տեսական և ճանաչողական նշանակությունը
- 3.Սովորողների ինքնուրույն գործունեությունը (անհատական, զույգերով, խմբային)
4. Նախագծի բովանդակային մասի կառուցում՝ առանձին փուլերի արդյունքների ներկայացմամբ:
5. Հետազոտական մեթոդների կիրառություն:

Կրթական պրակտիկայում գոյություն ունեցող ուսումնական նախագծի տեսակները

1.Ըստ նախագծային գործունեության մեջ գերիշխող բնույթի.

- Հետազոտական
- Տեղեկատվական
- Ստեղծագործական
- Դերախաղային
- Գործնական

2. Ըստ առարկայական- բովանդակային ոլորտի.

- Մեկ առարկայի շրջանակներում,
- Միջառարկայական նախագիծ

3. Ըստ փոխհարաբերությունների բնույթի (մեկ դպրոցի կամ դպրոցների, դասարանիկամ դասարանների, քաղաքի կամ քաղաքների, մարզի կամ մարզերի, երկրի կամ աշխարհի տարբեր երկրների մասնակիցների միջև)

5. Ըստ նախագծի մասնակիցների քանակի (անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ, մասայական)

6.Ըստ տևողության

- 🕒 մինի նախագիծ (1 դասժամ)
- 🕒 կարճաժամկետ(4-6 դասժամ)

🍷 միջնաժամկետ (մինչև 1 ամիս)

🍷 երկարաժամկետ(ամիսներ, կիսամյակ, ուսումնական տարի)

Նախագիծը կարող է իրականացվել ուսումնական ծրագրերի շրջանակներում, արտադասարանային գործունեության, խմբակների ֆակուլտատիվների և այլն:

Եթե դուք նախագծի ղեկավար եք(ուսուցիչ), ապա դուք պետք է կարողանաք.

🍷 ստեղծել մոտիվացիա,

🍷 ստեղծել կրթական միջավայր,

🍷 որոշել, ինչ պետք է սովորեն աշակերտները աշխատանքի արդյունքում,

🍷 կազմակերպել աշխատանք փոքր խմբերով կամ անհատական(ըստ անհրաժեշտության),

🍷 խմբերի հետ քննարկել հետազոտության մեթոդի, վարկածների առաջադրման, եզրահանգումները հիմնավորելու հետ կապված հարցերը,

🍷 խորհրդատվություն կազմակերպել,

🍷 կարողանալ հասարակ օրինակներով բացատրել բարդ երևույթները,

🍷 հետազոտության խնդիրն իմաստավորելու համար ներկայացնել համապատասխան այլ իրավիճակներ և այլն,

🍷 առաջադրել աշխատանքի ներկայացման տարբերակներ,

🍷 աշակերտների հետ մշակել օբյեկտիվ գնահատման չափանիշներ:

Կրթական նախագծերի տարբերակիչ առանձնահատկությունները

Նախագծի բնութագրությունը, տեսակները	Հիմնական տարբերակիչ առանձնահատկությունները	Նախագծի կառուցվածքը	Գերիշխող մեթոդներն ու եղանակները	Նախագծի հնարավոր արդյունքը
<i>Հետազոտական</i>	Ունի իսկական գիտական հետազոտության կառուցվածք	Թեմայի արդիականության հիմնավորում Խնդրի սահմանում Հետազոտության նպատակների ու խնդիրների ձևակերպում Հետազոտության վարկածի առաջադրում Հետազոտության մեթոդների ընտրություն Փորձի անցկացում Արդյունքների քննարկում Եզրահանգումների ձևակերպում Հետագա հետազոտական աշխատանքի խնդիրների ձևակերպում	Լաբորատոր փորձ Սոցիոլոգիական հարցումներ Մոդելավորում	Սոցիոլոգիական հարցումների վերլուծություն Համեմատական վերլուծություն Կանխագուշակում Հանձնարարականների փաթեթ Մոդել Հոդված և այլն
<i>Ստեղծագործական</i>	Թույլ է տալիս արդյունքների ձևակերպման առավելագույնս ազատ, ոչ ավանդական մոտեցում	Պահանջմունքի որոշում, հետազոտություն, նախագծին ներկայացվող պահանջների որոշում, սկզբնական գաղափարների մշակում, վերլուծություն և առավել արդյունավետ գաղափարի ընտրություն, պլանավորում, պատրաստում, գնահատում(անդրադարձ)	Նախագծման որևէ ստեղծագործական մեթոդի ընտրություն	Արտադրանք, տեսաֆիլմ, տոնակատարություն, արշավ, ռեպորտաժ, հավաքածու, մակետի դիզայն, ռեկլամային ուրվագիր, նկարագրողումների շարք, հեքիաթ,

				Ճամփորդության օրագիր, երաժշտական ստեղծագործություն, սցենար, շարադրությունների ժողովածու և այլն
Տեղեկատվական	Ենթադրում է տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի որոնում և վերլուծություն Կարող է լինել հետազոտական նախագծի մի մասը	Պահանջմունքի որոշում(լուսաբանում պահանջող օբյեկտի, երևույթի և այլն) Տեղեկատվության որոնում, հավաքում, վերլուծություն, ընդհանրացում Ինֆորմացիայի պահպանման սեփական համակարգի ստեղծում Ինֆորմացիայի ձևակերպում լայն լսարանի համար Ինֆորմացիայի տրամադրում	Աշխատանք գրականության, գրադարանային ֆոնդերի, լրատվական միջոցների, էլեկտրոնային բազաների հետ, հարցաթերթիկների լրացում, հարցազրույց, վերլուծություն, համեմատություն , ընդհանրացում, ձևակերպում, եզրահանգումների հիմնավորում	Ձեկուցում, հրապարակում լրատվական միջոցներում, տեղադրում ինտերնետում, մեթոդական ձեռնարկներ, էլեկտրոնային թերթեր, ամսագրեր, ուղեցույցեր, բառարաններ, ճամփորդությունների օրագրեր և այլն:
Գործնական կողմնորոշում ունեցող	Նախատեսվում է նախապես որոշված գործնական էլք	Նախագծի թեմայի, նպատակի խնդրի որոշում Նախագծի կառուցվածքի քննարկում, աշխատանքային պլանի կազմում Գործողությունների համաձայնեցում Անհատական կամ խմբային աշխատանք	Կախված է նախագծի տիպից	Ցուցահանդես Ռադիոհաղորդում Թատերական ներկայացում Դպրոցական տոնակատարություն

		<p>Ընթացիկ արդյունքների քննարկման հանդիպումներ</p> <p>Պրակտիկայում ստացված արդյունքի կիրառման արդյունավետության գնահատական</p> <p>Ստացված արդյունքի միջոցով առաջադրված խնդրի լուծում</p> <p>Ստացված արդյունքների ներկայացման կազմակերպում</p> <p>Պրակտիկայում կիրառման համար հնարավոր միջոցների ներդրում</p> <p>Նախագծի արտաքին գնահատման կազմակերպում</p>		<p>Web- կայք, ատլաս, ուղեցույց, բիզնես-պլան, հավաքածու, ցուցադրափեղկ(վահանակ)</p> <p>Բուկլետ</p> <p>Մուլտմեդիոն</p> <p>արտադրանք</p> <p>Սահկահանդես-ցուցադրում</p> <p>Ալբոմ</p> <p>Նամակ</p> <p>Վիրտուալ էքսկուրսիա և այլն</p>
<i>Խաղային տեխնոլոգիաներ</i>	<p>Հնարավոր չէ արդյունքը նախապես որոշել</p>	<p>Նախագծի խնդրի և նպատակի սահմանում</p> <p>Դերերի բաշխում</p> <p>Արդյունքների մոտավոր չափում</p> <p>«Խաղում ենք» տրված իրավիճակը Անդրադարձի կազմակերպում և ստացած արդյունքների հարաբերակցում սահմանած նպատակների հետ</p>	Դերախաղ	<p>Միջոցառումներ(խաղ, մրցություն, վիկտորինա, էքսկուրսիա և այլն)</p>

Մկսում ենք աշխատել ըստ նախագծերի մեթոդի

Ուսումնական նախագծի թեման ընտրվում է ռեալ կրթական խնդիրներից և կողմնորոշված է դեպի սովորողների ինքնազարգացումը, ինքնադաստիարակությունը, նշանակալի նպատակներ առաջադրելու և նպատակին հասնելու կարողության ձևավորումը, ինչն էլ թույլ է տալիս ապահովել հաջող սոցալիզացիան:

Առաջին հերթին, անհրաժեշտ է բացահայտել խնդրի էությունը, գտնել լուծման լավագույն ուղիներ, մտածել գործունեության քայլերի հաջորդականությունը:

Մանկավարժը վերահսկում է նախագծերի իրականացման միայն հենակետային պահերը, խորհուրդներ է տալիս, ոգևորում ինքնուրույն որոշումների կայացումը: Առաջադրանքները պետք է լինեն աշակերտի զարգացման մերձակա գոտուն համապատասխան:

Կրթական նախագծի իրականացման միջոցներ կարող են լինել.

- ✚ մանկավարժի և աշակերտների համատեղ ստեղծագործական գործունեությունը, որտեղ ուսուցիչն ու աշակերտը իրավահավասար գործընկերներ են, օգնականներ և խորհրդատուներ
- ✚ ակտիվ մտածական գործունեություն,
- ✚ իրական կրթական և սոցիալական իրավիճակների ստեղծում, որի շրջանակներում սովորողները հետազոտում են, խնդիրներ լուծում, վերլուծում, կազմակերպում սեփական գործունեությունը:

Կրթական նախագծում կարևոր միջոցներ են դառնում մանկավարժի և աշակերտների կողմից նպատակները սահմանելու, էական խնդիրները բացահայտելու, այն խնդիրները հստակեցնելու ունակությունը, որոնց լուծումից է կախված անհրաժեշտ արդյունքի ստացումը:

Նախագծային գործունեության փուլերը

1. Նպատակի սահմանման փուլ

Մինչև աշխատանքները սկսելը, նախագծի մասնակիցները պետք է պատասխանեն մի քանի կարևոր հարցերի

- Ինչո՞ւ է անհրաժեշտ այս նախագծի իրականացումը:
- Ինչո՞վ է պայմանավորված անհրաժեշտությունը:
- Կա՞րողոք այս նախագծի պահանջը:
- Ինչպե՞ս է հետազայում կիրառվելու այս նախագիծը:
- Ովքե՞ր են նրանք, ում համար ստեղծվում է այս նախագիծը:
- Ինչպիսի՞ն պետք է լինի նախագիծը, որպեսզի ամբողջությամբ պատասխանի առաջադրված խնդիրներին:
- Ովքե՞ր պետք է ստեղծեն այս նախագիծը և ի՞նչ չափով կարող են իրականացնել ստեղծագործական մտահղացումը:

- Նախագծի իրականացման համար ի՞նչ անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեն սովորողները հիմա և ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ունենան իրականացման ընթացքում:
- Ինչպե՞ս բաշխել պարտականությունները խմբի անդամների միջև:

II. փուլ- սցենարի և առաջադրանքների մշակում

Այս փուլում ենթադրվում է բովանդակության ընտրություն, որոշվում է նախագծի ծավալը, մանրամասները, մասնակիցները ստանձնում են իրենց դերերը, կատարվում է ժամանակի բաշխում:

III. Գործնական աշխատանքի փուլ

Այս փուլում արդեն աշխատանք է տարվում խնդիրների իրականացման ուղղությամբ, որն էլ պահանջում է բոլոր մասնակիցներից առավելագույն մասնակցություն, կարգավորված գործողություններ, ինչպես նաև նախագծի ղեկավարի(ուսուցիչ) նշանակալի ջանքեր նախագծի մասնակիցների գործունեության համաձայնեցման և աշխատանքների ընթացքի մշտական վերահսկողություն ուղղությամբ:

IV. Նախնական պաշտպանության փուլ

Այս փուլում իրականացվում է նախագծի նախնական դիտում, բացահայտվում են թերամշակումները, նշվում են թերությունների վերացման ուղիները:

V.Ներկայացման փուլ- նախագծի պաշտպանություն

Այս փուլում ներկայացվում է իրականացված աշխատանքը, տրվում նախագծի գնահատականը:

3.Հետազոտական աշխատանքի հիմնական փուլերը հանդիսանում են հետևյալ դրույթները

- Գտնել խնդիրը - ինչ պետք է ուսումնասիրել
- Թեմա-ինչպես անվանել
- Արդիականությունը – ինչու այդ խնդիրը պետք է ուսումնասիրել
- Հետազոտության նպատակը – ինչ արդյունք է ենթադրվում ստանալ
- Հիպոթեզ – ի՞նչ ակնհայտ չէ օբյեկտում(ուսումնասիրվող երևույթ, առարկա)
- Նորույթ – հետազոտության արդյունքում ի՞նչ նոր բան է հայտնաբերվել
- Հետազոտության խնդիրները՝ ինչ անել – տեսականորեն և գործնականում
- Գրական ակնարկ – ի՞նչ է արդեն հայտնի տրված խնդրի շուրջ
- Հետազոտության մեթոդները. ի՞նչ ենք ուսումնասիրել և ինչպե՞ս ենք ուսումնասիրել
- Հետազոտության արդյունքները(սեփական տվյալները)
- Եզրահանգումներ – առաջադրված խնդիրների սեղմ պատասխանները

- Նշանակալիությունը – ստացած արդյունքների կարևորությունը

Մանրամասն դիտարկենք բոլոր փուլերը

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը ստանդարտների մեջ է:
Հետազոտության գործընթացում առանձնացվում են երկու հիմնական մասեր.

- մեթոդաբանական
- ընթացակարգային

Առաջին հերթին, անհրաժեշտ է առանձնացնել այն, ինչը պետք է ուսումնասիրել – խնդիրը:

Խնդիրը պետք է լուծելի լինի: Լուծումը պետք է ռեալ օգուտ բերի հետազոտության մասնակիցներին:

Թեման պետք է օրիգինալ լինի, ունենա անսովոր, անսպասելի տարրեր, լինի արագ իրականացվող:

Որոշել, թե ինչու պետք է հատկապես ուսումնասիրել այդ թեման՝ արդիականությունը:

Հետազոտական աշխատանքում պետք է ձևակերպել նպատակը՝

- ✓ ինչպիսի՞ արդյունք ենք ուզում ստանալ,
- ✓ ընդհանուր առմամբ, ինչպես է երևում արդյունքը մինչև ստանալը,
- ✓ սովորաբար, նպատակը կայանում է որոշակի երևույթների ուսումնասիրման մեջ

Հետազոտության մեջ կարևոր է առանձնացնել **վարկածը: Վարկածը**

Իրադարձությունների կանխատեսումն է, հավանական գիտելիք, ոչ ճշմարտություն է, ոչ էլ կեղծիք, պարզապես ապացուցված չէ:

Պաշտպանվելիք դրույթները այն են, ինչ հետազոտողը տեսնում է, իսկ ուրիշները չեն նկատում: Այդ դրույթները կամ հաստատվում են, կամ մերժվում: Վարկածը պետք է լինի հիմնավորված գրական տվյալներով ու տրամաբանական ըմբռնումներով:

Այնուհետև ձևակերպվում են հետազոտության խնդիրները

Հետազոտական աշխատանքի նպատակը մեկն է, խնդիրները՝ մի քանիսը:

Խնդիրները ցույց են տալիս, թե դուք ինչ եք պատրաստվում անել:

Խնդրի ձևակերպումը սերտ կապված է հետազոտության կառուցվածքի հետ:

Խնդիրների մի մասը կարող է դրվել տեսական մասում, մյուս մասը՝ գործնական:

Աշխատանքում պետք է լինի գրական ակնարկ. հետազոտվող երևույթի կարճ նկարագրություն.

- ի՞նչ է հայտնի հետազոտվող երևույթի մասին,

- այլ հեղինակների հետազոտություններ
- Ակնարկում պետք է երևա, թե ինչ է հայտնի տարբեր աղբյուրներից, ի՞նչ նոր խնդիր եք առաջադրում դուք և չեք անում այն, արդեն արել են ուրիշները:

Այնուհետև նկարագրվում են հետազոտության մեթոդիկան: Մեթոդիկան ևս պետք է մանրամասն նկարագրվի աշխատանքում:

Դա կլինի նկարագրությունն այն բանի, ինչ և ինչպես է արել հետազոտության հեղինակը առաջ քաշած վարկածի ճշտությունն ապացուցելու համար:

Այնուհետև ներկայացվում են հետազոտության արդյունքները՝

- հետազոտական գործունեության ընթացքում ստացած սեփական արդյունքները:

Ստացած տվյալներն անհրաժեշտ է համադրել, համեմատել գիտական աղբյուրների տվյալների հետ, ցույց տալ հետազոտության ընթացքում հայտնաբերած օրինաչափությունները:

Անհրաժեշտ է նշել արդյունների նորույթը.

- առաջին անգամ ստացած նոր արդյունքներ(նախկինում ոչ մեկի կողմից չնկատված)
- հետազոտության արդյունքների շնորհիվ գործնականում ի՞նչ թերություններ կարելի է շտկել:

Հետազոտության ընթացքում ձեռք ենք բերում շատ աշխատանքային նյութեր, տվյալներ: Անհրաժեշտ է կարողանալ մշակել ու ներկայացնել ամենաանհրաժեշտները: Մնացած կարևոր նյութերը կարելի է ներկայացնել ներդիրում:

Առավել շահեկան է տվյալների գրաֆիկական ներկայացումը: Այն կարդացողի համար մաքսիմալ ձևով հեշտացնում է տեքստի ընկալումը:

Միշտ ձեզ պատկերացրե՛ք կարդացողի դերում:

Աշխատանքը ավարտվում է **եզրահանգումով**:

Այստեղ դրույթների ձևով շարադրվում են հետազոտության արդյունքները:

Եզրահանգումները կարճ պատասխաններն են այն հարցերին, թե ինչպես են լուծվել առաջադրված հետազոտական խնդիրները:

Նպատակին կարող ենք հասած լինել նույնիսկ այն ժամանակ, եթե պարզվում է, որ վարկածն անհիմն է:

2. Պաշտպանության ընթացակարգը

Ջեկուցողի խնդիրն է՝

- հստակ և հուզականորեն շարադրել հետազոտության բուն էությունը:
- կարճ ներկայացնել հիմնական բովանդակությունը(10-15րոպե), երբեմն պետք է «գոհաբերել» մի քանի կարևոր պահեր, եթե հնարավոր է դրանք շրջանցել,

Նյութի ներկայացման ժամանակ ճիշտ կլինի առաջնորդվել ըստ հետազոտական աշխատանքի կառուցվածքին ու կատարման տրամաբանությանը համապատասխան պլանի:

Մնացածը, եթե լսարանը հարցեր ունենա, կարելի է ներկայացնել հարց ու պատասխանի ձևով:

Աշխատանքն ու զեկուցումը գիտական ստեղծագործության բոլորովին տարբեր ժանրեր են:

N	Գնահատման չափանիշներ				
1	<i>Ընտրված թեմայի արդիականությունը</i>				
2	<i>Թեմայի բացահայտման խորությունը</i>				
3	<i>Նախագծի գործնական նշանակությունը</i>				
4	<i>Կոմպոզիցիոն կուռ կառուցվածք</i>				
5	<i>Շարադրանքի տրամաբանականություն</i>				
6	<i>Համապատասխանությունը պլանին</i>				
7	<i>Եզրահանգումների հիմնավորվածությունը</i>				

8	Ձևակերպումների ճշտությունն ու գրագիտությունը				
9	Դիզայնը				
10	Աշխատանքի կատարման ինքնուրույնությունը				
11	Սեփական նյութերի (հեղինակային)կիրառություն				
12	Բովանդակալից ներդիր				
13	Սկզբնաղբյուրների կիրառություն				
14	Պաշտպանության սցենարի շարադրման տրամաբանականությունը				
15	Հաշվետվության գրագետ կառուցվածքը				

16	Ամենահետաքրքիրն ու ամենաարժեքավորը ներկայացնելու կարողություն				
17	Նյութին տիրապետելը				
18	Հարցերին պատասխանելու կարողությունը				
19	Սեփական տեսակետը պաշտպանելու կարողությունը				
20	Լսարանին տիրապետելու կարողությունը				

Եզրահանգում

Հետազոտությունից պարզ դարձավ, որ արդիական այն պահանջը, որ ուսուցիչը սովորողների մոտ պետք է ձևավորի կյանքում խնդիրներ

առաջադրելու և լուծման նոր ուղիներ որոնելու, գտնելու ունիվերսալ կարողություններ, դաստիարակի ազատ, ինքնուրույն մտածող, իր համար անհրաժեշտ գիտելիքներ հայթայթող ու կիրառող, ինքնուրույն որոշումներ կայացնող, գործունեությունը պլանավորող, տարբեր խմբերի հետ արդյունավետ համագործակցող մշակութային անհատ, հնարավոր է իրականացնել ժամանակակից կրթամանկավարժական տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Ուսուցիչների և աշակերտների համատեղ հետազոտական գործունեությունը հատկապես զգալի չափով կնպաստի ժամանակակից կրթական խնդիրների իրականացմանն ու վերառարկայական կարողությունների զարգացմանը: